սախ հեռու, մի ընդարձակ հովտում ընկած է Սնկերտը. դա զատ-զատ, երեք անշուք թաղերից բաղկացած մի գիւղ է, ուր տները աչքի են ընկնում իրենց անպաճոյճ կառուցուածքով։ խմելու ջուրն աղբիւրի է, որ բղխում է գիւղի փէշերից, իսկ արևելեան կողմը փռուած են ծառազարդ արտերը, որոնք գիւղին գեղեցիկ տեսք են տալիս, բայց նրա զարդը հանդիսանում է դէպի արևելք տարածուող գետակը, որն օձապտոյտ հոսում է արտերի փէշերից։

Գիւղը զուտ հայաբնակ է, 94 տնով, 630 շնչով, որից 314-ը արական է և 316-ը իգական։ Նրանք գաղթած են Հին — Ջուղայի գիւղերից 1606 թուին, Շահ-Աբբասի ձեռքով. պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ։

Հողը պատկանում է 3 կալուածատէրերի՝ Մամթաղի, Մերփանջ և Մէհդի-Ղուլի, որոնց մէջ բաժանուած է հողը։ Գիւղացիներից միայն հինգ տուն հող ունեն, մնացեալները հողազուրկ են. նրանք մի հաբբային 7 բեռ ցորեն են տալիս աղաներին. մօտաւորապէս տարեկան 504 բեռ ցորեն և գարի են վճարում։ Հողը մեծ մասամբ ջրովի է, վարում են արօրով ու ցանում նոյն հացաբոյսերը։

Այստեղի գիւղացիութիւնը միանգամայն անտէր և անտիրական լինելով, մեծամասնութեամբ գտնւում է ծայրայեղ թշուառութեան մէջ. նա միշտ ենթակայ է աղաների և քէդխուդաների կամայականութիւններին. մասնաւորապէս գանգատւում էին գիւղացիները Ռուստամ քէդխուդայիցը և անէծքով յիշում նրա անունը։

— Մայրիկ, ինչո՞ւ էք գանգատւում Ռուստամից, — դիմում ենք մի կնոջ, որ անվերջ բողոքում էր նրա մասին։

— Ա՜խ հողեմ նրա գլուխը, — արցունքոտ աչքով դարձաւ նա ինձ, — դեռ երկու ամիս առաջ էր, որ նա տարաւ իմ չորս օղչարը երկու բեռ ցորնի պարտքի տեղ. խիզաններիս (զաւակ) հացը բերնիցը կտրեց . . . ա՛յ բալամ, նա միացած է խաների հետ և մեր արիւնն է ծծում։

Քէդխուդայի հետ հարստահարում են և գիւղի աղա-